



Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի համատեղ նախաձեռնությամբ իրականացվող «Եվրոպական ժառանգության օրեր» նախագիծն այս տարի նշվում է սեպտեմբերի 22-23-ին՝ «Մշակութային ժառանգության եվրոպական տարի. կիսվելու արվեստը» խորագրով: «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանն այս տարի սեպտեմբերի 22-ին «Եվրոպական ժառանգության օրեր» նախագիծին կմիանա նոր, էլեկտրոնային ցուցահանդեսով՝ «Հայկական ժառանգությունը Եվրոպայում. կիսվելու արվեստը» խորագրի ներքո: Հայ ժողովուրդն իր սկզբնավորումից մինչ օրս, բազմաթիվ հանգամանքների բերումով, հանգրվանել է աշխարհի տարբեր երկրներում: Օտար երկրներում հայերը մշտապես արարել են, ստեղծագործել և թողել մշակութային հարուստ ժառանգություն՝ կիսելով իրենց բացառիկ հմտություններով հայտնի արվեստը: Ստեղծագործ հայ վարպետներն իրենց անջնջելի և ուրույն հետքն են թողել նյութական և ոչ նյութական աժեքների կերտման, համաշխարհային ժառանգության գլոխգործոցների ստեղծման, գիտության և արվեստի բոլոր ուղղություններում կարևոր ավանդների ներդրման և այդ մեծ ժառանգությամբ աշխարհի ժողովուրդների հետ կիսվելու գործում:

Այս ցուցադրությամբ անդրադարձ կարվի հայ ժողովրդի՝ աշխարհի հետ կիսած հարուստ ժառանգությանը, մասնավորապես Եվրոպայի ամենից հայտնի հայկական նյութական մշակութային ժառանգության արժեքներին, որոնք այսօր զարմացնում և հիացնում են իրենց բացառիկությամբ: Ցուցադրության դիտումից հետո «Արմենյան թևեր» վոկալ խումբը ժառանգության պահպաններին կներկայացնի հայկական ժողովրդական երգերի ընտրանի: Այնուհետ, ժամը՝ 15:00-ին, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ գիտաճանաչողական շրջայց կիրականացնի ուրարտական «Կարմիր բլուր» կամ «Թեյշեբաինի» հնավայր, ուր արգելոց-թանգարանի «Կարմիր բլուր» մասնաճյուղի վարիչ, պ.գ.թ. Միքայել Բադալյանը կներկայացնի Ուրարտուի և, մասնավորապես, Կարմիր բլուրի պատմությունը: